

## ԱՆՏԻՎ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴՈՒՐԳԻ ԱՆԻՎԵՆՈՐ ԴՎԻՆԻՑ

### ԳԱՅԱՆԵ ԲՈՉԱՐՅԱՆ

1974 թ. Դվինի կենտրոնական թաղամասում, միանավ բազիլիկ եկեղեցու շրջակայքից, հայտնաբերվել է դուրգի՝ տուֆից պատրաստված անիվի ստորին մաս (նկ. 1), որն ունի դեպի ցած լայնացող, խնամքով հղկված կարճ հիմք և կոնաձև ակոս (չափերն են. պահպանված մասի բարձրությունը՝ 7 սմ, հիմքի բարձրությունը՝ 3,5 սմ, տրամագիծը՝ 13 սմ, ակոսի տրամագիծը՝ 5,5 սմ):

Դուրգի անիվը գտնվել է V—VI դդ. միջնադարյան շերտին նախորդող հորիզոնում, որն ունի մոտ 0,5 մ հաստություն և հարուստ է հելլենիստական դարաշրջանին բնորոշ գունազարդ և հասարակ խեցանոթների բազմաթիվ նմուշներով (տափաշշերի, քրեղանների, գավաթների, պնակների, ձեղնոր պսակների անոթների բեկորներ):


Դեռևս 1966—1967 թթ. միջնաբերդի գագաթի «բակ» կոչված պեղվածայրում, վաղ միջնադարյան շինության սենյակների հատակի տակից (մոտավորապես 0,2 մ խորությունից), հայտնաբերվել են բացառապես հելլենիստական ժամանակի (մ. թ. ա. II—I դդ.) նյութեր<sup>1</sup>, որոնց թվում նաև դուրգի անիվի գրեթե գլանաձև ստորին մաս՝ կոնաձև ակոսով (նկ. 2, չափերն են. պահպանված մասի բարձրությունը՝ 9 սմ, հիմքի տրամագիծը՝ 10 սմ, ակոսի տրամագիծը՝ 5,5 սմ): Անիվը դեղնավուն կավից է, բաց վարդագույն փայլեցման հետքերով: Այսպիսի մշակումը և գունազարդումը բնորոշ է հելլենիստական դարաշրջանի խեցեղենին:

Հնագիտական և ազգագրական նյութերի համադրումը հնարավորություն է ընձեռում արժարժեի Դվինում հայտնաբերված դուրգերի անիվների կառուցվածքային և տեխնոլոգիական որոշ հարցեր: Նման դուրգերը բաղկացած են եղել սկավառակից, առանցքից և հենակից: Սկավառակը պտտվել է հենակին անշարժ ամրացված, կոնաձև ծայրով առանցքի շուրջը: Դուրգերի այս խումբը հայտնի է վաղագույն ժամանակներից՝ որպես ձեռքի օգնություն պտտվող սարքեր: Դվինի դուրգերի անիվներն անշուշտ պատկանում են ձեռքով պտտվող դուրգերի շարքին: Չափերից և կոնաձև ակոսից կարելի է ենթադրել, որ դրանք, հավանաբար, եղել են ոչ այնքան զանգվածեղ, սակայն առանցքի հետ շփման անհամեմատ փոքր մակերեսն ապահովել է անիվի պտույտի իներցիայի ուժը:

Դուրգի անիվների առկայությունը Դվինում արտահայտվում է խեցեղենի կայուն և հաստատուն ձևերի, հաճախ ստույգ կրկնությունների, նաև մի ձևի բազմազան և բազմաձև տարբերակների, անոթների բարդ ձևավորված շուր-

<sup>1</sup> Ա. Ժամկոյանի, Յ. Բաբայանի, Կ. Քուզնարյանի՝ 1966, 1967 թթ. պեղումների դաշտային օրագրերը (Հայաստանի պատմության պետական թանգարան, Դվինի հնագիտական ֆոնդ):

թերի, տարբեր մասերի սաշուն և համաշափ անցումների, շափերի ու նախաշերտի կայուն, համաշափ և գեղարվեստորեն ներդաշնակ լուծման մեջ: Դուրզը ապահովելով արտադրության արագ և որակյալ ընթացքը, նպաստում էր անոթների ոչ միայն կիրառական, այլև գեղագիտական նշանակության



ի հայտ գալուն: Դվինի խեցեղենի մեծագույն մասը, դուրզով պատրաստվելուց հետո, ենթարկվելով հետագա մշակման (հղկման և անգորպատման՝ հատկապես գունավոր լուծույթներով), կորցրել է անիվի հետքերը, սակայն կան առանց անգորգի նմուշներ, որոնց վրա պահպանվել են դրանք՝ նեղ, շրջանաձև, կանոնավոր, խիտ ակոսագծերի ձևով:

Տուֆից պատրաստված ձեռքի դուրզի անիվ հայտնաբերվել է նաև Արտաշատում (տրամագիծը՝ 23 սմ, բարձրությունը՝ 10 սմ): Սրա հիմքը կոնաձև է, կենտրոնում ակոսով: Վերջինիս ստորին՝ հիմքի մասը, այնպես ցայ-



տուն չի ընգծված, ինչպես Դվինի տուֆե անիվները: Սակայն ելնելով կառուցվածքից, ենթադրվում է, որ սա ևս աշխատել է նույն սկզբունքով, այսինքն՝ ձեռքի օղնությամբ պտտվել է անշարժ առանցքի շուրջը: Ժամանակագրական առումով ևս քննվող անիվներն աղերսվում են, քանի որ Արտաշատի դուրգի անիվը գտնվել է VII բլրի I շինարարական շրջանին (մ. թ. ա. II—I դդ.) պատկանող շերտում<sup>2</sup>: Ուշագրավ է, որ հունական անտիկ նրբագեղ անոթների մեծագույն մասը պատրաստվել է հենց ձեռքի դուրգով. մասնագետները նշում են վերջիններիս կիրառությունը անտիկ դարաշրջանում նաև հյուսիս-մերձսևծովյան բնակավայրերում<sup>3</sup>:

Ռոնդելդարյան խեցեղենի ուսումնասիրությունից ենթադրվում է, որ պարզ հաստոցային սարքը Հայաստանում առաջին անգամ հանդես է եկել մ. թ. ա. III հազարամյակում, տեխնիկայես կատարելագործվելով՝ մ. թ. ա. II հազարամյակի ընթացքում<sup>4</sup>: Կավից պատրաստված դուրգի ամենավաղ անիվներ և մասեր (այդ թվում նաև դուրգի քարե մեկ հենակ) հայտնի են ուրարտական հուշարձաններից (Կարմիր բլուր, Արին-բերդ, Արգիշտիխինիլի)<sup>5</sup>: Դրանք զանգվածեղ են և աչքի են ընկնում իրենց շափերով (տրամագիծը՝ 30—35 սմ, հաստությունը՝ 5—6 սմ): Անիվների կլոր սկավառակները և գրեթե գլանաձև ոտքերը ունեն ընդգծված անցումներ:

Դուրգի լավ պահպանված անիվներ հայտնի են Դվինի միջնադարյան շերտերի պեղումներից. ընդ որում՝ մեկը պտտվել է ոտքի օգնությամբ<sup>6</sup>:

Ուրարտական, հելլենիստական և միջնադարյան դուրգի անիվներն արտաքննապես էական փոփոխությունների չեն ենթարկվել՝ չհաշված որոշ մանրամասներ: Օրինակ՝ վերը նկարագրված համաժամանակյա դուրգերի քարե անիվների վերին և ստորին հիմքերի մասերն ավելի միաձույլ են, միատարր (հատկապես Արտաշատի դուրգի անիվները): Նման ձևը, հավանաբար, բխել է նյութի (տվյալ դեպքում քարի) մշակման առանձնահատկությունից:

Հնագիտական նյութի սակավությունը թույլ չի տալիս գուրգի անիվների ստույգ տիպաբանական պատկեր ստեղծել ժամանակագրական կարգով: Սակայն ակնհայտ է, որ ժամանակն առանձնապես չի ազդել ուսումնասիրվող նյութի կառուցվածքային սկզբունքի, հետևապես և ձևի վրա: Այժմ էլ հայ գեղջևուհին օգտագործում է ձեռքի դուրգ, որի խուլ ակոս-առանցքակալով շրջանաձև սկավառակը նույնպես պտտվում է քարի մեջ ամրացված

2 ժ. Դ. Խաչատրյան, Արտաշատի VII բլրի 1973—1975 թթ. պեղումների արդյունքները (ՀՄՄ ԳԱ «Լրաբեր», 1978, № 8, էջ 63, տախտ. I<sub>1</sub>):

3 В. Д. Блаватский, История античной расписной керамики, М., 1953, с. 20; А. А. Бобринский, О. Н. Мельникова, Гончарный круг у населения южновосточной культуры («Советская археология», 1977, № 2, с. 180).

4 Ք. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. I, Երևան, 1958, էջ 214, Օ. Ս. Խնկիկյան, Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում («Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 9, Երևան, 1977, էջ 57—60):

5 Б. Б. Пнотровский, Кармир-блур, т. II, Ереван, 1952, с. 85, рис. 46; А. А. Мартиросян, Аргистихинили, Ереван, 1974, с. 115. Մ. Իսրայելյան, էրերունի բերդ-քաղաքի պատմությունը, Երևան, 1971, աղ. XV:

6 Կ. Ղաֆաղարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 235, նկ. 219, Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ. («Հայաստանի հնագիտական հուշարձանները», № 5, Երևան, 1970, աղ. XXI 6-7):

անշարժ առանցքի շուրջը (որպեսզի անիվը շտատանվի, վերջինս լրացուցիչ ամրացվում է խաչկապով պահվող շորս ճաղերով):

Ուրարտական և միջնադարյան համանման նյութերի շարքում Դվինում և Արաաշատում հայտնաբերված հելլենիստական ժամանակաշրջանի դուրզի անիվների բացառիկ նմուշները վկայում են Հայաստանի անտիկ շրջանի խեցեգործության աճի և զարգացման որոշակի մակարդակի մասին, որը ընդ-թացվում է տեղական խեցեղենի մասսայական արտադրությամբ:

## ГОНЧАРНЫЕ КРУГИ АНТИЧНОЙ ЭПОХИ ИЗ ДВИНА

Г А Я Н Э К О Ч А Р Я Н

### Резюме

При раскопках античных слоев Двина были обнаружены фрагменты ручных каменных и глиняных гончарных кругов. Найден также характерный для эллинистического времени керамический материал (II—I вв. до н. э.). Сохранились только нижние части гончарных кругов—цилиндрические ножки, немного расширяющиеся в виде раструба с глубокими конусовидными отверстиями для стержня вращения. Своими конструктивными особенностями они напоминают каменный гончарный круг эллинистического времени (II—I вв. до н. э.) из Арташата.

<sup>7</sup> Е. С. Сафкисян, Гончарное искусство Армении, Ереван, 1978, с. 44, рис. 5.